

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀԱՐԱԹ
20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014Թ. № 34 (342)

**Ուրիշ ճանադարհ
չկա. ներսից է
լինելու հասցան
փրկությունը,
որովհետև ներսից
ենք փչացած:**
ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻ ՔՈՒՄԱՆԻՏԱՆ



Ձախողված վիճակագրություն եւ մթերման բացակայություն

Պյունյացիների մասին

Խորհրդային կարգերի փլուզումը շարժառիթ համար անկախ դարձավ գյուղի խարխումբը: Սա ասում ենք ո՛չ ցավով, ո՛չ էլ նախկինի նկատմամբ կարողախորով, ուղղակի արձանագրում ենք փաստը: Սկզբում անասնաբուժական «ցրեցին», հետո անասնաբուժական լայնքն ու երկարությունը եղանակ չստեղծեցին եւ սկսեցին քանդ ու քարափ անել, վերջում էլ բանը հասավ գյուղատնտեսական «բաշխմանը»: մի կողմի գնով բեռնափարը վաճառեցին, երկուսի գնով՝ կոմբայնը, բուլդոզերն էլ փոխեցին երկու հորթի հետ... ու երբ եկավ դրանց օգտագործման ժամն ու պահը, ասացինք՝ էս ի՞նչ արեցինք:

Այո, մենք դժվարություններ ենք ստեղծում եւ սկսում դրանք հերոսաբար հաղթահարել: Բա էլ ինչո՞ւ են ասում «հայի վերջին խելքն իմը լինեց»: Այդպես էլ սկսեցինք երկրի վերականգնումը: Ուշադիր եղեք, տասնյակ, հարյուրավոր գործարանների ծխնեղակներից քսան տարուց ավելի ծուխ չի բարձրացում, չեն աշխատում, չեն էլ աշխատելու: Բայց այլ է վիճակը գյուղում: Ուղղակի կույր պետք է լինել դա չնկատելու համար:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ. «Առաջիկայում դրամը կարծելուով, եւ դա անժխտելի է»

«Դրամն այսօր գերարժեզրկված է, իսկ դուրսը՝ գերարժեզրկված», - լրագրողների հետ համոզմամբ ղեկավարների 17-ին հայտարարեց Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Չավադյանը՝ պնդելով, որ առաջիկայում դրամը կարծելուով, եւ դա անժխտելի է:

Գիտնական իրականացումը: 33 դրամի իրական գինը հայտնի կլինի գերարժեզրկման պատճառները վերանայուց հետո: Ներկայումս 33 դրամը գերարժեզրկված է, եւ սպեկուլյացիոն ու անհարկի խուճապային իրավիճակը վերանայուց հետո 33 դրամը զգալիորեն կարծելուով է:

ձեռնպահ մնալ փոխարժեքի տատանման վրա գումար աշխատելու գայթակհությունից»:

Չավադյանի խոսքով՝ բանկային համակարգում արտարժույթի խնդիր չկա, եւ հարկ եղած դեպքում Կենտրոնական բանկն ունի հնարավորություն՝ տրամադրելու անհրաժեշտ ծավալի իրացվելիություն: «Նման խուճապով փոխարկումներն անհմատ են: Կենտրոնական բանկն իրավիճակը միշտ պահում է վերահսկելի: Մենք վստահ ենք, որ տիրապետում ենք գնաճի զսպման բոլոր հնարավորություններին: ԵՑ 2

Նոր մասնաշենքի գործարկման սպասումով

Առողջադատություն

Մեղրու փարածաշրջանի բժշկական հաստատությունների կառուցվածքային փոփոխությանը մեր թերթն անդրադարձել է, մասնավոր՝ Մեղրու հիվանդանոցի դարձված շենքի ճակատագրին: Այնուամենայնիվ, որպես հրապարակման նախաբան, ցանկանում ենք ներկայացնել խնդրո առարկայի նախապատմությունը: Դեռեւս 2009-ի սեպտեմբերի 19-ի նիստում 33 կառավարությունը որոշել է միաձուլել Սյունիքի մարզի «Մեղրու բժշկական կենտրոն» եւ «Ագարակի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունները՝ միավորելով թեր-

բեռնված բժշկական ծառայությունները եւ սպեղծելով նոր՝ «Մեղրու փարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը: Ընդ որում՝ հաշվի առնելով Ագարակի հիվանդանոցի վիրաբուժական, մանկաբարձագինեկոլոգիական եւ ինֆեկցիոն ծառայությունների օգտագործման համեմատաբար բարձր ցուցանիշները՝ որոշվել է այդ ծառայությունները կենտրոնացնել Ագարակում, իսկ թերապիական ծառայությունները թողնել Մեղրիում, որոնք փեղակայված են վերջինիս նախկին բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի շենքում (N 0052 որոշում):
ՇՆՐՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՑ 6



Լուսինե Վարդանյան, «Մեղրու փարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն

Մի քիչ տարօրինակ, անհասկանալի թվաբանություն կա մանր եղջերավոր անասունների գլխաքանակի մեջ: Այստեղ միակ constant-ը այն է, որ 1990թ. մարզի տարածքի մասնավոր եւ պետական սեկտորում եղել է 146540 ոչխար:

Ասում ենք՝ անասնաբուժական, մասնավորապես մանր եղջերավոր անասունների հաշվառումը կատարվում է «աչքաչափով», որովհետեւ մարզպետարանի համապատասխան ծառայությունից վերցրած թվերը եւ մեր հարցումների արդյունքներն առանձին համայնքներում ուղղակի չեն համապատասխանում իրար: Մարզպետարանից հայտնում են, որ մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 111036 է, իսկ մեր տվյալներով այն գերազանցում է 135 հազարը, կամ Տեղ համայնքում ոչխարի գլխաքանակը 21000 է, իսկ մեր տվյալներով՝ 30 հազարից ավելի: Խնդիրներ կան, հնամաշխուհի՝ 7 հազարական՝ ըստ մարզպետարանի, ըստ մեր տվյալների՝ 1500-2000-ով ավելի:

Այո, անասնաբուժական հաշվառման գործում թերություններ շատ կան, բայց պետությանը դրանց հասցրած տնտեսական վնասը զգալիորեն քիչ է այն վնասից, որ պետությունը, ֆերմերը կրում են անասնապահական մթերքների անբավարար կամ մթերման իսպառ բացակայությունից:

Ընդհանուր առմամբ թյուր կարծիք կա, որ անասնապահությանը զբաղվող գյուղացիները, կամ ինչպես կամաց-կամաց վարժվում ենք՝ ֆերմերները, պետությունից անհրաժեշտ ծառայությունները եՑ 5


ՎԱՅԱԳՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Մեր փնտրությունը պարտապարզ էր նման վայրիվերումների»

Նախագրույց համարին

Հայկական դրամի արժեզրկման, համատարած բանկացումների, Հայաստանի ֆինանսական շուկայում վերջին օրերին ստեղծված իրավիճակի մասին է զրույցը հանրապետությունում ճանաչված տնտեսագետ Վահագն Խաչատրյանի հետ:

– Պարոն Խաչատրյան, նախ խնդրում ենք բնութագրել Հայաստանի դրամաֆինանսական շուկայում այս օրերին ստեղծված արտառոտ իրավիճակը. ի՞նչ է կատարվում հայկական դրամի հետ, հայաստանյան արժույթի շուկայում:

– Երեւանի փոխանակման կետերում կատարվող ցույց է տալիս, որ իրավիճակն արդեն դարձել է անկառավարելի: Կենտրոնական բանկը, հատկապես անցած շաբաթ, մոր գործիքակազմ սկսեց կիրառել շուկայում. ամեն օր վաճառում է որոշակի քանակությամբ արտարժույթ՝ մոտ 1,6 մլն չափով, բայց մեկ շաբաթվա ընթացքում այդպես էլ չկարողացավ կարգավորել շուկան: Երկու օր էլ գիտեին, որ դոլար վաճառվում է խուճապային տրամադրությունը կարծես մարվում էր, իրարանցումային առևտուր չկար, բայց դրամի կուրսն էլի սկսում էր ընկնել, եւ մեկ շաբաթվա ընթացքում դոլար-դրամ հարաբերակցությունն էլ 453-ից դարձավ 495: Բայց այս երկուշաբթի լրիվ այլ երևույթ տեղի ունեցավ, ոչինչ չէր կարգավորվում ողջ օրվա ընթացքում, դոլարն արժեւորվում էր: Արդեն ոչ ոք չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում, ամեն մեկը մի ձեռով էր դրամ արձագանքում, եւ կուրսի տարբերությունը տարբեր տեղերում մեծ էր. մի տեղ դոլարը վաճառվում էր 550-570 դրամով, մի այլ տեղ՝ մոյսիսկ 600-ով: Եվ սա ցույց էր տալիս, որ իրականում արդեն անկառավարելի գործընթացի մեջ ենք հայտնվել: Թե ինչքանով կիսաջողվի ԿԲ-ին կանգնեցնել դրամի գահավիժումը, դժվար է ասել, որով-



ՅՈՒՏԱՐԻՍ

հետեւ առանձնապես մեծ հնարավորություններ են չունի, արտաքին պահուստները, որոնցից ԿԲ-ն օգտվելով կարող է ինտերվենցիաներ անել շուկայում եւ փորձել կանոնակարգել այն, այնքան էլ մեծ չեն:

– Եվ ինչի՞ հետ էք դուք կապում այս գործընթացը:

– Տեղի ունեցողը իրականում կապված է մի քանի համաձայնագրերի հետ: Դրանցից մեկը Ռուսաստանից եկող դրամական փոխանցումների կամ ինչպես ասում ենք՝ տրանսֆերտների քանակի նվազումն է: Երկրորդը մեր արտաքին առևտրի տեմպերի նվազումն է եւ երրորդը, իհարկե, ներդրումների պակասելը:

Այս պայմաններում արդեն ԿԲ-ի օգտագործած միջոցները բավարար չեն, որպեսզի կարողանա իրավիճակը կայունացնել: Ամեն օրվա գործընթացները լավ բան չեն խոստանում

– Ի՞նչ է, ի վերջո, կատարվում դրամի հետ՝ արժեւորում, թե՞ արժեզրկում... Շատերն ասում են՝ դրամն իջնում է իր իրական միջին, որը համապատասխանում է մեր երկրի մակրոտնտեսական կացությանը:

– Իրականում արժեզրկում է տեղի ունենում, սա չի կարող արժեւորում լինել: Դա բավականին վիճելի է, որովհետեւ, ի վերջո, դա սահմանում է շուկան: Մեզ մոտ ԿԲ-ն լողացող կուրսի քաղաքականություն է վարում, որը նշանակում է, որ կուրսը ոչ թե ԿԲ-ն է որոշում, այլ՝ շուկան, նշանակում է՝ անհավասարակշռություն է ստեղծվում առաջարկի եւ պահանջարկի տարբերության պատճառով: Հիմա տեղի ունեցողը հենց դա է, որը, նախենաք, կախված է մեր տնտեսության վիճակից: Մենք այդպես էլ չկարողացանք դուրս գալ տնտեսության այն կացությունից, որը 2009-ին էլ նման դրության առաջ կանգնեցրեց հանրապետությունը: Այն ժամանակ էլ նմանափայ իրավիճակ էր ստեղծվել: Էլի դեկտեմբերի վերջն էր, հունվար-փետրվարին 700 մլն դոլարի ներարկումով կուրսը պահվեց 300 դրամի շրջանակում, բայց մարտի 3-ին միանգամից 20-22 տոկոս արժեզրկում տեղի ունեցավ: Եվ դա եղավ շատ թանկ գնով, որովհետեւ 2009թ. ընթացքում, որպեսզի կարողանայինք հարթահարել տնտեսական ճգնաժամը, մոտ 2-3 մլրդ դրամի պատսկան պարտք կուտակվեց: Իսկ այժմ այդ հնարավորությունները չունենք, որովհետեւ պարտքային սահմանափակումներ կան օրենքով մինչեւ համախառը ներքին արդյունքի (ՀՆԱ) 50-60 տոկոսը: Մինչդեռ արդեն մոտենում ենք 50 տոկոսին. այսինքն՝ ռիսկային գոտում ենք...

– Երկու է, կանխատեսումներ անելն իրատեսական չէ, բայց, այնուամենայնիվ, որպես փորձառու տնտեսագետ, ի՞նչ եք կարծում՝ մինչեւ ո՞ր միջոց կարող է անկում ապրել դրամը: Արդյո՞ք մեզ սպասվում է դեֆոլտ (անվճարունակություն) կոչվածը:

– Մենք չկարողացանք ստեղծել այնպիսի մի տնտեսություն, որը կարողանար ապահովել ներդրումներ, արտահանման գոնե նախատեսված կամ ավելի բարձր տեմպեր, որոնք մեզ հնարավորություն կտային ավելի անկախ տնտեսական քաղաքականություն վարել: Եվ կախվածությունն ԿԲ-ին է: Ե՛ք 4

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ. «Առաջիկայում դրամը կարժեւորվի, եւ դա անժխտելի է»

ՍԿԻՐԸ ԷՏ 1

ներին: Եվ մեր գերնպատակը մնում է գների կայունությունը»:

«Պղտոր ջրում ձուկ որսալ փորձողները կատարվեն», – վստահեցրեց նա: «Օգտվելով իրավիճակից, որոշ բիզնես վարողներ հնարավոր է արհեստականորեն բարձրացնեն որոշ ապրանքների գները կամ անգամ գնանշումն անեն արտար-

ժույթով: Դա օրենսդրության խիստ խախտում է»:

Բանկային համակարգը, ըստ Ջավադյանի, կայուն է, բանկերը վճարունակ են, առևտրային բանկերը կարող են կատարել իրենց բոլոր պարտավորությունները՝ այդ թվում սպասարկել հանրության բանկային հաշիվներն ու ավանդները. «Կենտրոնական բանկը սահմանափակում չի դրել, ոչ մի դեպքում

չի դնելու բանկերի վրա հաշիվների եւ ավանդների սպասարկման կամ այլ ծառայությունների գծով: Կենտրոնական բանկը խստորեն եւ հետևողականորեն է վերաբերում այդ հարցին: Եվ այն դեպքում, եթե պարզվի, որ բանկերն իրականացնում են որևէ սպեկուլյատիվ գործողություն, կենթարկվեն խստագույն պատասխանատվության»:

Արթուր Զավադյանը վերահաս-

տատեց, որ ստեղծված իրավիճակը կապված է նաեւ նավթի համաշխարհային գների անկման ու ռուսական ռուբլու արժեզրկման հետ. «Իհարկե, դա ազդեցություն ունի: Չի կարող չունենալ, որովհետեւ մենք ունենք բավականին լուրջ սփյուռք հենց Ռուսաստանի Դաշնությունում, եւ այն մեսիջները, որ այնտեղից գալիս են, այդքան էլ դրական չեն: Խուճապային են հենց այդ մեսիջները: Այն խուճապը, որը եղավ Ռուսաստանի Դաշնությունում, շատ հեշտ ձևով տեղափոխվեց Հայաստան»:

17.12.2014թ. azatutyun.am

Մարդիկ շուկա մեջ են, չեն հասկանում՝ ինչ է կատարվում

Սոցառոդական շուկա

«Դրամը գերարժեզրկված է, իսկ դոլարը՝ գերարժեւորված: Գերարժեւորման հիմնական պատճառներն են խուճապային իրավիճակն ու որոշ փնտրվածարողների կողմից սպեկուլյացիաների իրականացումը: ՀՀ դրամի իրական գինը հայտնի կլինի գերարժեզրկման պատճառները վերանալուց հետո: Ներկայումս ՀՀ դրամը գերարժեզրկված է եւ սպեկուլյացիոն եւ անհարկի խուճապային իրավիճակը վերանալուց հետո ՀՀ դրամը կարժեւորվի», – դեկտեմբերի 17-ին հայտարարեց Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանը:

Հայտարարություն անելուց հետո այցելելով Կապանի մի շարք խանութներ՝ իսկապես ականատես եղանք խուճապային իրավիճակի: Տազանապի մեջ էին եւ առևտրականները, եւ գնորդները: Առաջին անհրաժեշտության ապրանքների գները ժամ առ ժամ փոխվում էին, իսկ երեկոյան ժամերին խանութներում հնարավոր չէր գնել շաքարավազ եւ այլուր:

Նախատոնական տրամադրություն չզգացվեց անգամ սուպերմարկետներում, որտեղ այս օրերին սովորաբար առևտուրը եռում է: «Շատ հաճախ մարդիկ մտնում են խանութ, հարցնում ապրանքի գները եւ ձեռնունայն դուրս գալիս: Նրանք շուկա մեջ են, չեն հասկանում՝ ինչ է կատարվում շուկայում, ինչ կլինի վաղ գների հետ: Սա էլ մի յուրահատուկ եղանակ է», – վրդովված մեջք վաճառականներից մեկը:

Արդեն մի քանի օր է՝ առևտրի կետերում հատկապես շաքարավազը սահմանափակ են վաճառում, իսկ դեկտեմբերի 17-ի երեկոյան, բացի քաղաքի մեկ սուպերմարկետից, շաքարավազ չկար: Այն խանութներում, որտեղ վերջին անգամ շաքարավազ կաճառել, կիրգորամի գինը 430-480 դրամ էր, իսկ սուպերմարկետում՝ 600 դրամ: Դեկտեմբերի 18-ի առավոտյան կրկին մույս պատկերն էր. խանութներում շաքարավազ չկար, իսկ վաճառողն էլ ասաց, որ դեռ այսու էլ չի լինի:

Խանութներ մտնելիս անմիջապես աչքի էին զարնում մոր «թարմացված» գնապիտակները, իհարկե, ավելացված գներով: Որոշ խանութներ մտանք այն պահին, երբ գնապիտակները փոխում էին, ապրանքի մի մասն էլ դեռ գնապիտակ չուներ. հավանաբար վաճառականները չէին կողմնորոշվում գնի հարցում:

Մի տեղ ասացին, որ ապրանքը չեն թանկացրել, սպասում են, թե մոր ստացվող ապրանքն ինչ գնով կառաքեն: Վաճառողներից մեկն էլ, որ ավելի բարեխիղճ էր, ասաց, որ ապրանքը թանկացնելու առաքիչների պահանջին միանշանակ պատասխան է տվել. «Դու ինձ թանկ ապրանք ես տվել, որ հիմա պահանջում ես թանկացնել»: Դրան հակառակ՝ մեկ ուրիշը կարծես ոգևորությամբ պատասխանեց. «Թանկ ստանում ենք, թանկ վաճառում»:

Պարկով այլուր հազվադեպ խանութներում հանդիպեցինք. 25 կգ-անոց պարկով այլուրը նախկինում 7000-7500 դրամ էր, երեկ վաճառվում էր մեկ-երկու խանութում, այն էլ 9000 դրամով: Այլուրի դեֆիցիտ, ինչպես շաքարավազին էր, չկար, ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ ԷՏ 4

Ի գիտություն բաժանորդների
Ընթանում է «Այոնյաց երկիր» թերթի 2015թ. բաժանորդագրությունը: Հայտնում ենք, որ թերթի տարեկան բաժնեգինը **10,000** դրամ է:



Ջանազան գործերով այնքան է ծանրաբեռնվել ուսուցիչը, որ երբեմն մոռանում է իր գլխավոր խնդիրը՝ երեխաներին ուսում փակը



Վանակրթություն

Կապանի Շղարշիկ բանվանում ներկայումս գործող N8 միջնակարգ դպրոցը նախկինում եղել է աղքատ-ջանական դպրոց, որտեղ ժամանակին սովորել է մոտ 200 աղքատների աշակերտ: 1994-95 ուստարում մերձակայքում 14 տնակ են տեղադրել, եւ բացվել է ութամյա հայկական դպրոց՝ մանկապարտեզ: Այդ ուսումնական տարվա սկզբում կար 15 աշակերտ, վերջում՝ 22, մանկապարտեզում՝ 9 երեխա: Հետագայում Կապանի ներկայիս զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանի միջնորդությամբ դպրոցը 1995թ. մարտից տեղափոխվեց մինչ այդ զինվորական ստորաբաժանման զբաղեցրած շենքը եւ առայսօր այնտեղ է տեղակայված:

Ի դեպ, Այուրյացի մարզում առաջին դպրոցն էր, որ Արցախյան պատերազմից հետո անվանակոչվեց գոհված ազատամարտիկ Մարտիրոս Հայրապետյանի անունով, որ հետագայում, սակայն, վերացվեց: 2005-06 ուսումնական տարվանից դպրոցը միջնակարգ է: 2013-14 ուստարվա սեպտեմբերի 1-ին դպրոցում կար 93 աշակերտ, 2014-15 ուստարում՝ 114 (ի դեպ, Կապանի տարածաշրջանի գյուղական եւ բանվանների դպրոցներից աշակերտների թվով ամենամեծ դպրոցն է): Նախորդ ուստարում դպրոցն ավարտել է 12 աշակերտ: Այս ուստարում յոթ աշակերտ է ընդունվել առաջին դասարան, իսկ 13 աշակերտ կավարտի: Աշակերտների թվով ամենամեծ դասարանը 11-րդ



Գագիկ Հարությունյան, դպրոցի տնօրեն

ՄԱՍԿԱՐԵ Ա. ՀԱՐՈՒՅՆՅԱՆ

դասարանն է՝ 15 աշակերտով: 2015-16 ուստարում առաջին դասարան կհաճախի 7-8 երեխա: 2013-14 ուստարվա 12 շրջանավարտից 10-ն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն: Այս ուստարվա 13 շրջանավարտից 11-ն անպայման դիմելու է բուհ:

«Հաշվի առնելով դպրոցի կրթության մակարդակը, աշակերտների համար անվճար ուղեվարձը՝ դպրոցում տարեցտարի աշակերտների թվի աճ է նկատվում», - նշեց դպրոցի տնօրեն Գագիկ Հարությունյանը: «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերության տնօրեն Հրաչ Ջաբրայանն է աշակերտների ուղեվարձը փոխանցում: Նրա հովանավորությամբ այս տարի աշակերտները երկու անգամ մեկնել են հեռավոր էքսկուրսիա, ինչպես նաեւ դպրոցը պրոյեկտոր է ձեռք բերել:

Դպրոցում դասավանդող 22 մանկավարժից 19-ը բարձրագույն կրթություն ունի: Ուսուցիչները հիմնականում ապահովված են դրույքաչափով. նվազագույնը՝ 17 դասաժամ, առավելագույնը՝ 24: Այս ուստարում դպրոցում աշխատող չի կրճատվել, ընդամենը ոչ մանկավարժական հաստիքներից մեկ դրույք կրճատում է արվել: Մանկավարժները համապատասխանում են իրենց պաշտոնին, նույնիսկ ինքնուրույն մասնագետ ունեն, որ շատ դպրոցներում խնդիր է: Դպրոցում 40 տարվա մանկավարժական փորձ ունեցող երկու մանկավարժ է աշխատում, ովքեր այս տարի արժանացան պատվոգրի:

Նախորդ ուստարում առարկայական հանրապետական օլիմպիադայի հանրապետական փուլին դպրոցից մասնակցել է երեք աշակերտ: 2012-13 ուստարում անվերելից դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում 3-րդ կարգի դիպլոմ է արժանացել Սուսաննա Հայրապետյանը, 2013-14 ուստարում մարզային փուլում պատճարհանակոթոնուհ է 5

ՄԱՍԿԱՐԵ Ա. ՀԱՐՈՒՅՆՅԱՆ

Դասարանները համայնքի ղեկավարը մեղադրվում է...

Իրավական

Այուրյացի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնում ավարտվել է Դասարաներ համայնքի ղեկավարի կողմից պաշտոնական դիրքը չբարձրացնելու եւ ձեռնարկատիրական գործունեության մասնակցությունը ղեկավարի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Մինչդեռ տարածված է կողմից բերված ապացույցների համաձայն՝ երեւան քաղաքի բնակիչ, ԱՊ ընկերության ներկայացուցիչ Բ.Աբրահամյանը 2007թ. ամռանը հանդիպել է Այուրյացի մարզի Դասարաներ համայնքի ղեկավար Ն.Ֆիլոսյանին, հայտնել ընկերության կողմից Դասարաներ համայնքում հեկ կառուցելու նպատակի մասին՝ խնդրելով հողատարածք տրամադրել: Վերջինս, հավանություն տալով առաջարկին, 2007թ. հունիսի 17-ին հրավիրել է համայնքի ավագանու նիստ եւ առաջարկել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.2հա հողը էներգետիկ, կապի, տրանսպորտի եւ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու համար ՀՀ կառավարությանը դիմելու մասին որոշում ընդունել, այնուհետեւ, հիմք ընդունելով ավագանու՝ նույն

օրն ընդունած թիվ 8 որոշումը, հողի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով Այուրյացի մարզպետարանի միջոցով դիմել է ՀՀ կառավարությանը: Կառավարության 2008թ. փետրվարի 7-ի թիվ 125 որոշմամբ նշված հողատարածքի նշանակությունը փոխվել է: Այդ մասին համայնքի ղեկավարը տեղեկացրել է ԱՊ ընկերության ներկայացուցիչին: Ապա, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, 2008թ. ապրիլի 28-ին, խախտելով գործող օրենսդրության պահանջները՝ ըստ որի համայնքի ղեկավարը չի կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, բաժնեմասերի առք ու վաճառքի պայմանագրով գնել է տվյալ ԱՊ ընկերության 8% բաժնեմասը եւ դարձել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ընկերության մասնակից: Իսկ 2008թ. մայիսի 4-ին հրավիրել է ավագանու նիստ եւ առաջարկել էներգետիկ, կապի, տրանսպորտի եւ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրված համայնքային սեփականություն հանդիսացող 0.2հա հողը ԱՊ ընկերությանն օտարելու մասին որոշում կայացնել, որից հետո, օգտագործելով համայնքի ղեկավարի իր լիազորությունները, նույն օրը որոշում է կայացրել եւ նշված հողը ուղղակի

վաճառքով օտարել արդեն իսկ իր մասնակցությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ԱՊ ընկերությանը: Հողատարածքում հեկ կառուցելու նպատակով համապատասխան լիցենզիա եւ քաղաքաշինական այլ փաստաթղթեր ձեռք չբերվելու պատճառով մինչեւ 2010թ. նշված հողատարածքում չի նարարություն չի իրականացվել: Բ.Աբրահամյանը 2010թ. գարնանը խնդրել է Ն.Ֆիլոսյանին թույլատրել առանց չինարարության թույլտվության եւ քաղաքաշինական այլ փաստաթղթերի իրականացնել հեկի շինարարական աշխատանքներ՝ մինչ համապատասխան փաստաթղթեր ձեռք բերելը, ինչը վերջինս թույլատրել է: Ավելին՝ շինարարական աշխատանքներին ինքնակամ ներգրավել է քեռուն եւ Դասարաներ համայնքի մի խումբ բնակիչների: Ընկերությունը 2010-2012թթ. ընթացքում իրականացրել է հեկի ինքնակամ շինարարական աշխատանքներ: Ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ Ն.Ֆիլոսյանին մեղադրանք է առաջարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով եւ 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ օրենքով սահմանված արգելքին հակառակ՝ անձամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպության կառավարմա-

նը մասնակցություն եւ շահադիտական դրույմներից ելնելով՝ իր ծառայողական պարտականությունը չկատարելու, այսինքն՝ էներգետիկ, կապի, տրանսպորտի եւ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրված համայնքային սեփականություն հանդիսացող 0.2հա հողը արդեն իսկ իր մասնակցությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ԱՊ ընկերությանն ուղղակի վաճառքով օտարելու, ընկերության կողմից 2010-2012թթ. ընթացքում իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքները չկանխարգելելու եւ չկասեցնելու, ընկերության նկատմամբ դիտավորությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները չօտարելու հետեւանքով համայնքի իրավունքներից եւ օրինական շահերին էական վնաս պատճառելու համար:

Քրեական գործը 2014թ. նոյեմբերի 24-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Այուրյացի մարզի դատախազին:

Ծանուցում
Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվող կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:
ՀՀ քննչական կոմիտեի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

Լուրեր

Վ Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը» զեկույցի, որն անդրադառնում է 2008-13թթ. ժամանակահատվածում Հայաստանի սոցիալական վիճակին եւ կենսամակարդակի փոփոխություններին, 2013-ին Հայաստանի բնակչության գրեթե ամեն երրորդը՝ 32 տոկոսը (967 հազար մարդ), եղել է աղքատ, որից 13.3 տոկոսը՝ շատ աղքատ, իսկ 2.7 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ: Ըստ սպառման ազդեցատի՝ աղքատության մակարդակը Այուրյացի մարզում 25.2 տոկոս է (ամենաաղքատը Շիրակն է՝ 45.9 տոկոս, ամենացածր ցուցանիշը՝ Վայոց ձորում է՝ 21.0 տոկոս, Երեւանում այն 25.5 տոկոս է): 2013-ին աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008թ. ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ բոլոր մարզերում եւ երեւանում, բացի Վայոց ձորի մարզից: Եթե 2008-ին Այուրյացում աղքատ էր բնակչության 20.3 տոկոսը, ծայրահեղ աղքատ՝ 1.3-ը, 2013-ին համապատասխանաբար 1.8 եւ 25.5 տոկոսը: Այուրյացում աղքատ է երեխաների 27.2 տոկոսը, ծայրահեղ աղքատ՝ 2.5 տոկոսը, երեխաների աղքատության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Շիրակում՝ 54.3 տոկոս: Ըստ զեկույցի՝ բերրի հողերի առավել մեծ համամասնությունը ոռոգվել է 75-100 տոկոս՝ Արարատի եւ Արմավիրի մարզերում, իսկ հողերի նշված չափով ամենափոքր համամասնությունը ոռոգվել է Այուրյացի մարզում:

Վ Այուրյացի մարզի ընդհանուր իրավասության դատարանում դեկտեմբերի 12-ին կայացավ Սիսիանի քաղաքապետ Արամի Հակոբջանյանի, նրա նախկին տեղակալ Աշոտ Գրիգորյանի, «Սիսիանի լրատու» ՍՊԸ տնօրեն Արմեն Հովակիմյանի, նույն ՍՊԸ հաշվապահ Հասմիկ Եսայանի, քաղաքապետարանի ֆինբաժնի պետ Կարեն Դանիելյանի գործերով հերթական դատական նիստը: Դատարանը նախ հրապարակեց բացակայող վկաներ Սուրեն Ստեփանյանի (Սիսիանի քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ), Արտուր Գրիգորյանի (Աշոտ Գրիգորյանի որդին է) եւ Աննա Աբգարյանի (Արտուր Գրիգորյանի կինն է) նախաքննական ցուցմունքները: Այնուհետեւ դատարանը հրապարակեց դատաքննությանը վերաբերող ապացուցողական ուժ ունեցող բոլոր փաստաթղթերը: Սույն գործով հաջորդ նիստը նշանակվել է այսօր:

Վ Դեկտեմբերի 4-ի նիստում ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել, որով աջակցություն է ցուցաբերվել ՀՀ 2014-2015թթ. ցորենի սերմնաբուծության եւ սերմարտադրության զարգացման ծրագրով 2012թ. աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմնացուի հետվերադարձը անբարենպաստ բնակիչայական պայմանների հետեւանքով չապահովված շահառուներին: N1368 որոշմամբ թույլատրվել է ՀՀ ութ մարզի 103 շահառուի հետ կապված պայմանագրերում փոփոխություններ կատարել: Այուրյացի մարզում այն վերաբերում է երեք ֆերմերի: Ըստ որոշման հավելվածի՝ Իշխանասար գյուղից Քաջիկ հասցեարկային պիտի վերադարձվի 2 մլն 700 հազար դրամ գումար, Լծենցի Մելիք Եղիազարյանին՝ 900 հազար դրամ, Սպվարդից Սեյրան Փանյանին՝ 510 հազար դրամ:

«Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս...»

Յայ մեծ քնարերգու Յան Սահյանի 100-ամյակի առթիվ հայրա-րարված սահյանական փարին դեռ շարունակվում է: Այունյաց հողում բանաստեղծի ջերմ երկրպագուները շարունակում են ամենօրյա հնչեցնել նրա բանաստեղծությունները՝ կազմակերպված գրական միջոցառումների, սահյանական փոստերի ժամանակ:



Յի ուսանողներ Անի Ստեփանյանը և Յայկ Զաղայանը:

Օրերս Գորիսի պետական քոլեջում անց կացվեց Յան Սահյանին նվիրված «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս...» գրական-երաժշտական միջոցառումը, որը կազմակերպել էր քոլեջի հայ գրականության դասախոս Աննա Ալեքսանյանը: Միջոցառմանը մասնակցում էր հաստատության դասախոսական և ուսանողական կազմը:

Բացման խոսքում Աննա Ալեքսանյանը ներկայացրեց մեծ քնարերգուի պոետիկայի ողջ ներկայակերպը՝ կարեւորելով բանաստեղծի բնապաշտական ուղղվածությունը:

Բանաստեղծի անզուգական պոետիկայի և նրա անմահ հիշատակին նվիրված ջերմ խոսք ասաց նաև քոլեջի դասախոս Ելանորա Յարուսյանը:

Միջոցառումը վարում էին քոլե-

գեղեցիկ կատարում: Քոլեջի տարբեր բաժինների ուսանողներ ասունքեցին Յան Սահյանի շատ ու շատ բանաստեղծություններ՝ հայրենասիրական, բնության ու սիրո թեմաներով:

Սահյանական տարվան նվիրված գրական-երաժշտական միջոցառումը, բնույթով լինելով ուսուցողական և ճանաչողական, նրա ընթերցող-երկրպագուների կողմից մի յուրովի հարգանքի և սիրո տուրք էր մեծ բանաստեղծի անմահ հիշատակին:

Դասախոս Աննա Ալեքսանյանի կողմից կազմակերպվող նմանաբնույթ գրական միջոցառումները, որ վաղուց բարի ավանդույթ են դարձել քոլեջում, ամեն անգամ ուսանողությանը, մասնակիցներին պարզեւում են գեղեցիկ ու անկրկնելի պահեր՝ նրանց տոգորելով հայ պոետիկայի ու գրականության հանդեպ սիրով, առ նրա մեծեր՝ հուշի ու հիշատակի երակտիվով:

Բանաստեղծին նվիրված այս միջոցառումը մեկ անգամ եւս հավաստեց, որ Սահյանը մնում է ամենահողոված, հողոտ ու հողեղեն բանաստեղծը, ով մարդու մեջ տեսավ բնությունը և բնության մեջ էլ անմահացրեց մարդուն:

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՔԱՆԱՅԱՆ

Շարունակելով ընտանեկան և դպրոցական ավանդույթները

Ազգային բանակ

Սերժանտ Արա Սահակյանն ավարտում է զինծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարության «Վարդան Մամիկոնյան» շքանշանակիր 60369 զորամասում: Երբ թերթը լույս տեսնի, գուցե արդեն նա հրաժեշտ տված լինի իր բանակային ընկերներին: Հայրենիքի պաշտպանն ավարտել է Կապանի ՌՅ միջնակարգ դպրոցը, Երեւանի խաչատուր Արուստյանի անվան մանկավարժական համալսարանի «Ռազմական մանկավարժություն և հոգեբանություն» ֆակուլտետի երրորդ կուրսից զորակոչվել է ազգային բանակ: Սերժանտ Սահակյանը կրում է «Գերագանցիկ զինվոր» կրծքանշանը: Իսկ զորացրվելուց առաջ զորամասի հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում հայրենիքի պաշտպանի ծնողներին՝ հայտնելով, որ



նա աչքի է ընկնում ընկերասիրությամբ, ազնվությամբ, բարեխղճությամբ, կարգապահությամբ և կամքի ուժով: Հրամանատարի տված առաջադրանքներն ու հրամաններն անվերապահորեն կատարում է, ինչպես նաև ամեն ինչում հարգում է դպրոցում ստացած գիտելիքները բանակային կյանքում հմտորեն կիրառելը: Հրամանատարությունը նաև համոզմունք է հայտնել, որ Արան զինծառայության ավարտից հետո, համադրելով ռազմական գիտելիքները և դպրոցում ձեռք բերած բարի ավանդույթները, կգործի ի շահ Հայաստանի զարգացման և բարօրության:

Ինչ խոսք, որ Ամանորը բարձր տրամադրությամբ են դիմավորելու հայրենիքի զինվորի ծնողները՝ Արթուր Սահակյանը և մանկավարժ Լիլիթ Դավթյանը: Արթուր Սահակյանն Արցախյան պատերազմի մասնակից է, «Մարտական ծառայության» մեդալի է արժանացել: Վստահորեն կարելի է փաստել, որ Արան ընտանեկան ավանդույթները շարունակում է:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ է երեք սենյականոց բնակարան, Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

Շարունակելով ընտանեկան և դպրոցական ավանդույթները

Այունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայտարարում են շարադրությունների մրցույթ՝ «Կարդալով Սերո Խանգաղյանի ստեղծագործությունները» թեմայով: Մրցույթին կարող են մասնակցել մարզի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողները: Մրցույթի արդյունքներն ամփոփելու վերջնաժամկետը 2015թ. մայիսի 1-ն է: Լավագույն երեք շարադրությունը կհրատարակվի «Այունյաց երկիր» թերթի՝ Սերո Խանգաղյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում, իսկ հեղինակները կարժանանան դրամական պարգևի:

Այունյաց երկիր
«Այունյաց երկիր»

ԿՈՐԵԼ է Սեդրու ՈՂ միջնակարգ դպրոցի 1992-93 ուսարվա շրջանավարտ Մերի Ալեքսանյանի Հարությունյանի ԱՕՕ35480 ատեստատը: Համարել անվավեր:

ՈՒՂՈՒՄ Սեր թերթի նախորդ համարում տեղ է գտել անձնությունը «Բարեգործություն Մեծ Բրիտանիայից» հրատարակման մեջ: «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մանկական բաժանմունքի հիմնադրողը օգնություն է ցույց տվել ոչ թե Հայ առաքելական եկեղեցու Անգլիայի թեմը, ինչպես գրված է տեքստում, այլ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Մեծ Բրիտանիայի տեղական մարմինը:

Դու դեռ գիրք չե՛ս տպագրել...

Ստորհրդածություն

ՍԿԻՉԲԸ ԷՁ 7
րին հրատարակված ցանկացած գեղարվեստական գիրք, ապա կտեսնենք, որ դրանց տպագրանակը 10 հազարից պակաս չէ: Եվ դրանք սպառվում էին մի քանի օրում, երբեմն վերավաճառվում 2-ից 5 անգամ բարձր գնով:

Այսօր 500-1000 օրինակ գիրք են տպագրում, մի քանի հարյուրը նվիրում կազմակերպություններին, ծառայող-բարեկամներին, մնացածները կապոցներով պահում գործընկերներին: Առնեն, որ ի՞նչ անեն: Ընթերցողին հետևություններ անելու համար այլ օգնություն և տեղեկատվություն պետք չէ:

Հ. Սահյանի ծննդյան 100-ամյակի շրջանակներում հեռուստատեսությամբ հարցազրույց էր նրա որդու՝ Նաիրիի հետ: Լրագրողը հարցրեց, թե ինքը՝ Նաիրին, երբեք բանաստեղծություն գրել է: Ասաց, որ գրել է և սկզբում կարդացել մայրիկին: Մայրը հավանություն է տվել և խորհուրդ՝ հայրիկին կարդալ: Տղան կարդացել է: Հ.Սահյանը որդու բանաստեղծությունը լսելուց հետո իր ձեռով երկար լռել է ու հետո կտրուկ ասել է՝ չգրես:

Բայց նա էլ գայթակղությամբ

չդիմացավ՝ չանսաց հորը ու բանաստեղծությունների ժողովածու լույս ընծայեց: Այո, ժամանակները փոխվել են այս բառի բոլոր իմաստներով: Հիմա նորից անդրադառնանք գիրք տպագրելու վարակիչ հիվանդությանը:

Գորիսը ժամանակ առ ժամանակ հայտնվում է հասարակական ծագում ունեցող հիվանդությունների ճիրաններում: 80-ական թվականներին Գորիսում ծաղկում էր «թեթև» արդյունաբերությունը: Նման արտադրամասերի թիվն անցնում էր մի քանի տասնյակից: Բայց դա զուտ գորիսյան երեւույթ էր և բացատրվում էր մինչ այդ քաղաքում տրիկոտաժի հզոր արտադրական միավորման առկայությամբ: Իսկ գիրք տպագրելը տեղական հիվանդությունն է, այն արդեն դարձել է համազգային:

Վերջերս հասարակական տրամապորտում հանդիպեց հին ծանոթներիցս մեկը: Բարեւեց՝ լայն ժայտով, ու հետո էլ՝ բա չես հարցնում վերջին գրքիս մասին, ոնց որ չե՛ս կարդացել (Աստված իմ, այս ինչքան եմ հետ մնացել կյանքից: Ես առաջինի մասին գաղափար չունեմ, իսկ նա վերջինից է խոսում): Այստեղ էլ ես չդիմացա գայթակղությանը և պատասխանեցի հայտնի բառախաղով. «Թե իմանայի, որ վերջինն է՝ անպայման կկարդայի»:

Ձագի, որ վիրավորվում են նրանով, որ նա մեզ բոլորիս է վիրավորել, իսկ ես՝ միայն իրեն:

Իսկ դու դեռ գիրք չե՛ս տպագրել...

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

«ԴԻԱՆ»

ՀԱՅՐԱՊԵՏԱՆ





Առաջին հարկում՝ ճաշարան, սրճարան: Հյուրանոցն ունի 30 տեղանոց փակ ավտոկայանատեղի: Զբոսաշրջիկներին տրվում է ամերիսթեշ տեղեկատվություն քաղաքի տեսարժան վայրերի վերաբերյալ, ցանկության դեպքում՝ կարող են օգտվել զբոսավարի ծառայությունից:

Զրամատակարարում՝ տաք և սառը, ջեռուցում, գերարագ ինտերնետ, արբանյակային հեռուստատեսություն և այլ հարմարություններ:

Մեկտեղանոց, երկտեղանոց, երեքտեղանոց, նաև լյուքս համարներ: Սպասարկման բարձր կուլտուրա, մատչելի գներ:

Գ.ԿԱՊԱՆ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ 3/2/1-2
(0285) 2 01 20, (098) 88 60 40

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐՎԻԾ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 80 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում ևս հեղինակների չեն վերադարձվում:

Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Լույս է տեսնում երկու անգամ շաբաթը մեկ փոխարինված (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱՐԴ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութերը:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպագրանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 19.12.2014թ.: